ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Արջուտ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Արջուտ	Ավագանու հերթական նիստ	07.05.2020թ.	12:00	**Արջուտի համայնքապետարան**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. մայիսի 07-ին՝ ժամը 12.00-ին Արջուտի համայնքապետարանի շենքում
կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 12.00

1.Արջուտ համայնքի ավագանու 2020թ. մայիսի 07-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Վ.Մկրտչյան

2.Արջուտ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 02-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Մկրտչյան

3. Արջուտ համայնքի ավագանու որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Վ.Մկրտչյան

4.Արջուտ համայնքի հողամասերի վարձակալության տրամադրման և աճուրդ վաճառքի մասին

զեկ. Վ.Մկրտչյան

5.Արջուտ համայնքի ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին

զեկ. Վ.Մկրտչյան

ՆԱԽԱԳԻԾ -Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 07-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. *ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Արջուտ համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 07-ի նիստի օրակարգը՝

1,Արջուտ համայնքի ավագանու որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

2,Արջուտ համայնքի ավագանու որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

3,Արջուտ համայնքի հողամասերի վարձակալության և աճուրդ-վաճառքի մասին:

4,Արջուտ համայնքի ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԱՍՄԻԿ ՄԱՑԱԿՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ -Ն

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 24-Ի ԹԻՎ 02-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Արջուտ համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 24-ի թիվ 02-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հավելվածների:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԱՍՄԻԿ ՄԱՑԱԿՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ -Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հեկ. *ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

ՈՒԺԸ կորցրած ճանաչել Արջուտ համայնքի ավագանու 08,04,2020 թվականի << Արջուտ համայնքի հողամասերի վարձակալության և աճուրդ-վաճառքի մասին>> թիվ 11-Ա որոշումը:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԱՍՄԻԿ ՄԱՑԱԿՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ -Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՃՈՒՐԴ-
ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ղեկավարի առաջարկած համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերի վարձակալության և աճուրդ-վաճառքի պայմանները՝ հետևյալ կերպ՝

Վարձակալություն՝

Լոտ 1 - 060-019-0107-0379 ծածկագրից, 5,27886 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը՝ 10 000 դրամ

Լոտ 2 - 06-019-0107-0381 ծածկագրից, 2,14981 հա արոտավայր, մեկնարկային գինը՝ 10 000 դրամ

Լոտ 3 - 26 հա խոտհարք, 1 հա-ի վարձավճարի մեկնարկային գինը՝ 5000 դրամ

Աճուրդ-վաճառք՝

Լոտ 1 - 06-019-0106-0036 ծածկագրից, 0,0865 հա բնակավայրերի այլ հողամաս, մեկնարկային գինը՝ 193 000 դրամ

Լոտ 2 - 06-019-0047-0014 ծածկագրից, 0,7 հա բնակավայրերի այլ հող, մեկնարկային գինը՝ 160 000 դրամ:

Մասնակցության վճարը՝ 1000 դրամ, նախավճարը և քայլերի չափը՝մեկնարկային գնի 5 %:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԱՍՄԻԿ ՄԱՑԱԿՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ -Ա

ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Վաղաժամկետ դադարեցնել Արջուտ համայնքի ավագանու անդամ Հովհաննես Խոյեցյանի՝ ավագանու անդամի լիազորությունները:

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԱՍՄԻԿ ՄԱՑԱԿՅԱՆ